

ՀՀ Արագածոտնի մարզպետ պրն.Գ. Գյոզայանին

Աշտարակիի քաղաքացիական երիտասարդական կենտրոնի
համակարգող, ՀՀ քաղաքացի Նարեկ Բոցինյանից

Հասցե. Արագածոտնի մարզ, Աշտարակ Վարդգես Պետրոսյան 11 փ

Էլ. Հասցե ashtarakcenter@gmail.com

1 դեկտեմբերի, 2016 թ.,

Տեղեկություն ստանալու հարցում-1/2016

Հարգելի պարոն Գյոզայանին

,Առաջնորդվելով ՀՀ «Տեղեկատվության ազատության մասին» օրենքով, խնդրում եմ
ինձ տրամադրել հետևյալ տեղեկությունները.


1. Արագածոտնի մարզպետարանը 2015, 2016 թվականներին ինչպե՞ս է ծախսել
ՀՀ պետական բյուջեի «Այլ նպաստներ բյուջեից» հոդվածով նախատեսված
գումարները, ովքե՞ր են եղել այդ ֆինանսական միջոցների շահառուները, ե՞րբ
եւ որքա՞ն դրամ է հատկացվել նրանցից յուրաքանչյուրին:

Եթե հարցված տեղեկությունները որեւէ կերպ հրապարակվել են, ապա
խնդրում եմ տրամադրել հրապարակումների հասցեները կամ աղբյուրները:

Խնդրում եմ հարցրած տեղեկություններ տրամադրել, պասսիանելով իմ
հետևյալ էլեկտրոնային հասցեներից որեւէ մեկին. ashtarakcenter@gmail.com կամ
narekbotsinyan@gmail.com

Կանխավ շնորհակալությամբ, տեղեկություն հարցնող

Նարեկ Բոցինյան





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

0201 ք. Աշտարակ, Վ.Պետրոսյան 4, Հեռ/ֆաքս (+374 232) 3 22 51
0201 г. Аштарак, В.Петросяна 4, тел /факс (+374 232) 3 22 51
0201 с. Ashtarak, V.Petrosyan 4, tel /fax (+374 232) 3 22 51 e-mail aragatsotn@mta.gov.am

_____ N _____

Ձեր 01.12.2016թ. թիվ 1-2016թ. գրության

**ԱՇՏԱՐԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՀՀ ՔԱՂԱՔԱՑԻ
ՆԱՐԵԿ ԲՈՑԻՆՅԱՆԻՆ**

Հարգելի Բոցինյան

2015-2016 թվականներին ՀՀ պետական բյուջեից <<Այլ նպաստներ բյուջեից>> հողվածով նախատեսված գումարները դրամական աջակցության կարգով տրամադրվել են սոցիալապես անապահով, զրկված զինծառայողների ընտանիքներին, հաշմանդամ և ծնողազուրկ անձանց:

Այդ հատկացումները կատարվել են մարզպետի որոշումներով, որոնք տեղադրված են մարզպետարանի aragatsotn.mtad.am կայքի Իրավական ակտեր բաժնի Մարզպետի որոշումներ ենթաբաժնում:

Հարգանքով՝

Գ. ԳՅՈՂԱԼՅԱՆ

Կատարող՝ Մ. Գրիգորյան

023231944